



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

# Pztiknerun t'uagitut'iwně

Hovhan G.  
P'alagashean

Palagashan, Hovhan G.

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Pettknerun tuagitutiwnē

ՊԵՏԻՔՆԵՐՈՒՆԻ մանկապարտեզներ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋՆԵՐՈՒ, ԾԱՂԿՈՑՆԵՐՈՒ

ԵՒ

ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ

ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԳՐԱՏՈՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սուլթան Համամ փողոց, քիւ 14

1903


UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grad

EREN

833

BOHR



ՇԱՐՔ  
ԵՐԵՆ  
833  
Շ. 10. 99

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ե. ՅՊԱԳՐՈՒԹԵԱՆ



1880 ին էր, Թրքահայոց մէջ նախաձեռնարկ եղածը հրատարակելու՝ Եւրոպական նոր մակաւորութեան սկզբանց համաձայն պատրաստուած Թուազիտութեան դասագրքեր, տարիներու բաժնուած: Մինչեւ այն ա-տեն, հնարարեան հակամանկավարժական ուղղութեամբ պատրաստուած դասագրքեր էին որ կը գործածուէին մեր բոլոր վարժարանաց մէջ: Մեր ձեռնարկ, Սէէւ ուսուցանելու հնաւանդ եւ հաստարմատ դրութեան հա-կառակ եւ բոլորովին նորերեւոյթ, մեր յուսացածէն աւելի ընդունելու-թիւն գտաւ, եւ մենք քաջալերուեցանք հեազհեաէ այդ գործին յաջորդ մասերն եւս հրատարակելու, եւ մէկ կողմանէ սպառած հատորներու կրկին տպագրութեան առթիւ ամէն անգամ վերստին քննելու զայնս եւ հարկ տեսնուած բարեփոխութիւններն ընելու:

Այս անգամ եւս, ուսումնասիրելով Եւրոպական այս կարգի շատ մը դասագրքեր եւ մեր ունեւնական փորձառութենէն եւս օգտուելով վերջա-տին քննութեան ենթարկեցինք վեր Թուազիտութեան դասագրքերու բոլոր հատորները, կարեւոր բարեփոխութիւններ ներմուծելով անոնց մէջ, ա-ռաւել եւս ճոխացնելով զայնս, առաւել եւս պատշաճեցնելով Եւրոպա-կան նոր մակաւորութեանն, մեր ցեղական առանձնայատուութեանց եւ տեղական պահանջմանց ու հանգամանաց, եւ անուանելով այս դասագրք-քերու շարքը՝ Նոր Դասընթաց Թուազիտութեան, Բանաւոր եւ Գրաւոր, բաժնուած՝ Տարրական, Միջին եւ Բարձրագոյն ընթացքներու, ընդամե-նը վեց տարուան ընթացքով: Ա. եւ Բ. տարիները կը կազմեն Տարրական դասընթացը, Գ. եւ Դ. տարիները՝ Միջին դասընթացը, Ե. եւ Զ. տարի-ները՝ Բարձրագոյն դասընթացը:

Ներկայ Ա. տարին՝ որ կրնայ կոչուիլ նաեւ Նախապատրաստական տարի, 6—8 տարեկան տղոց համար, ամենապարզ կերպով կ'ուսուցանէ գրել եւ կարդալ 1—100 թիւերն, մասնաւորապէս ընտելացնելով մանկը-տին 1—10 ամբողջ թուոց չորս գործողութեանց, ինչպէս եւ բերանացի հաշիւներու:

Տղան՝ այս տարիքին մէջ՝ տակաւին չի կրնար գործ ունենալ վերա-ցեալ եւ կենդան գործողութեանց հետ. ամէնէն առաջ նա պէտք ունի ըմբռնելու Սէ քնչ է միտքիւնը, քնչ է թիւը. պէտք ունի խելամուտ ըլ-լալու թուոց կազմական գրութեան, եւ հասկնալու հիմնական չորս գործո-ղութեանց ճեպակը եւ նպասակը: Այս արդիւնքը կրնանք ձեռք բերել՝ մի միայն քանձաւացեալ միջոցներ, ամենապարզ թիւեր եւ ըմբռնելի ձեւեր

գործածելով, Պէտք է որ հիմնական ծանօթութիւնք անդադար կրկնուին. պէտք է որ բազմազան հարցմունքք եւ հրահանգք, ընտանի ձեւով մը, տղոց ըմբռնել տան Յուսագիտութեան եւ ընթացիկ խօսակցութեան մէջ գործածուած ասութեանց արժէքն: Անհրաժեշտ է մանուաւնդ որ տղան միշդ խորհրդածելու վարժուի Յունոց կիրարկութեան, ինչպէս եւ ամէն բանի մէջ: Այս նպատակին պէտք է որ՝ ծառայեն իւրաքանչիւր դաս եւ իւրաքանչիւր խնդիր: Ուսուցչին կէտ նպատակին պիտի ըլլայ, այս նախակրթական դասերուն մէջ, խորհրդածութիւնն աւելի քան թէ հաշիւը: Ուսուցիչք եւ վարժուհիք պիտի աշխատին՝ այս ուղղութեամբ հրահանգելու մանկտին, եւ առ այս իրենց գործը մեծապէս պիտի դիւրացնէ՝ գործոյ մէջ ամփոփուած պարզ եւ ընտանի խնդիրներու եւ նպատակայարմար վարժութիւններու առատ պաշարը: Այս հանգամանքով, ներկայ հասորը կրնայ ծառայել աշակերտաց ձեռքն իբրեւ Յուսարմական պարզ խնդիրներու եւ հրահանգներու ճոխ Հաւաքածոյ մը, իսկ ուսուցչաց ձեռք՝ իբրեւ Առաջնորդ մը աւանդելի դասուց համար, թէ նիւթերու, թէ դասակարգութեան եւ թէ մեծոտի մասին:

**ՆԵՐՎԱՑ Զ.ԻՂ ՅՊԱԿԻՌՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒՄ**

Մեր պատրաստած Թուսգիտութեան Նոր Դասընթացքին զանազան հատորներուն սպառելովը, անոնց ի նորոյ տպագրութեան ձեռնարկելու առթիւ, նոր քննութեան մը թովէն անցուցիք զանոնք, նորանոր բարեփոխութիւններ ներմուծեցիք անոնց մէջ, եւ նոյն Դասընթացքը վերակազմեցիք հետեւեալ կերպով.

1. Պզտիկներուն թուագիտութիւնը.....	3	ԴՂ.
2. Տարրական Դասընթացք, Ա. տարի.....	3	»
3.       »               »       Բ.   »   [.....	3	»
4. Միջին Դասընթացք     Գ.   »   .....	4	»
5.       »               »       Դ.   »   .....	4	»
6. Բարձրագոյն Դասընթացք, Ե. եւ Զ. տարի .....	10	»



# ՊԳՏԻԿՆԵՐՈՒՆ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

## ԻՆՆ ԱՌԱՋԻՆ ԹԻՒԵՐԸ

### ՄԷԿ. I

Ցուցուցէք ինձ մէկ գիւղք, մէկ մատ, մէկ գրա-  
քար, մէկ տղայ, մէկ ձի, մէկ սեղան:



Ձի մր. 1



Տղայ մր. 1




Սեղան մր. 1


Կարդացէք եւ գրեցէք. 1 գիւղք, 1 մատ, 1  
գրաքար, 1 տղայ, 1 ձի, 1 սեղան, 1 գրիչ, 1  
մատիտ, 1 հաց, 1 տանձ, 1 խնձոր, 1 քարէ գրիչ,  
1 տետրակ:

# ԵՐԿՈՒ. 2

Հայրս մէկ տանձ տուաւ ինձ, մէկ տանձ ալ մայրս տուաւ. քանի՞ տանձ եղաւ. երկու տանձ:



Մէկ, մէկ ալ, կ'ընէ երկու.   
Կարդացէ՛ք եւ գրեցէ՛ք. 2 տանձ, 2 մատ, 2 աչք, 2 ականջ, 2 ձեռք, 2 ոտք, 2 սղալ:



1 տանձին քով քանի՞ տանձ դնելու եմ որ 2 տանձ ըլլայ:

2 տանձ ունէի, 1 հատը կերայ. քանի՞ տանձ մնայ: — Եթէ 1 հատն ալ ուտեմ, քանի՞ տանձ պիտի մնայ:

2էն 1 հաները նէ, քանի՞ կը մնայ:

1ին վրայ ի՞նչ աւելցնենք նէ՞ 2 կ'ուսենանք:


2էն 2 հաները նէ, քանի՞ կը մնայ:



# ԵՐԵՔ. 3

2 տանձ ունէի, 1 տանձ ալ եղբայրս տուան, քանի՞ տանձ եղաւ. — եղաւ երեք տանձ :



Երկու, մէկ ալ, կ'ընէ երեք [1].   
Ցուցուցէք ինձ երեք մատ, երեք գիրք, երեք գրիչ :



Մէկ ջղայ



Երկու ջղայ



Երեք ջղայ

Ի՞նչ է երեքը.

Երեքն է 1, աւելի 1, աւելի դարձեալ 1.



[1] Ուսուցիչը գրատախտակին վրայ շինելու է այսպիսի մեծ կէտեր եւ զանոնք ցոյց տալով աշակերտաց, անուանելու է մէկ, երկու, երեք, եւ այլն: Կրնայ փոքրիկ գնտակներէ կամ ուրիշ առարկայներէ եւս օգտուիլ՝ աշակերտաց մէջ զարթուցանելու եւ լաւ տպաւորելու համար թուոց գաղափարը :

Երեքն է 2, պեղի 1.



Երեքն է 1, պեղի 2.



Երեք շաբար ունէի, մէկ հատը կերայ. քանի՞ շաբար մնաց :

Զապէլ երեք խնձոր առաւ հորմէն. եղբայրը 1



խնձոր պակաս առաւ. եղբայրը քանի՞ խնձոր ունի :

Երեքէն 1 հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Երեքէն 2 հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Երեքէն 2, յետոյ 1 հանեցէք. ի՞նչ կը մնայ<sup>[1]</sup> :

Երեքէն երեք հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Վարդացէք եւ գրեցէք. 3 տանձ, 3 շաբար, 3



խնձոր, 3 մարդ, 3 կատու, 3 մուկ, 3 գիրք, 3 տղայ, 3 շուն, 3 տետրակ :



[1] Որպէս զի բոլոր աշակերտք կարենան նկատել թէ արդեօք տրուած պատասխանը ճիշդ է թէ՛ սխալ, ուսուցիչն իր ձեռք պէտք է ծածկէ հանելիք կէտերը, կամ գատէ հանելիք գնտակները : Ուսուցիչը, կէտերու կամ գնտակներու տեղ, կրնայ իր մասններն ալ ցոյց տալ :

# 2 ՈՐՍ . 4

Երեք տանձ ունէի, մէկ տանձ ալ քոյրս տուաւ, եղաւ չորս տանձ :



Յուցուցէք ինձ չորս մատ, չորս աղայ, չորս գիրք :

Ահա՛ երկու կէտ



Երկու կէտ ալ աւելցնենք .



Երկու եւ երկու, կ'ընէ չորս .



Կարգացէք եւ դրեցէք . 4 կաղամար, 4 գիրք, 4 գլխարկ, 4 քանակ, 4 գրչածայր, 4 շապիկ, 4 կոճակ, 4 գրասեղան, եւ այլն :

Երկու տանձ, երկու տանձ ալ, քանի՞ տանձ կ'ընէ :

Ամէն մէկ ձեռքիս մէջ 2 ընկոյզ ունիմ . ամէնը քանի՞ ընկոյզ ունիմ :

Գոհարիկ չորս ընկոյզ ունէր . 3 հատը կերաւ . քանի՞ հատ մնաց :

Իսկուհի չորս խնձոր ունի . Վերգինէ անոր կէտին [1] չափ ունի . քանի՞ խնձոր ունի Վերգինէ :

[1] Բացատրել թէ ի՞նչ է կէտը, թերթ մը թուղթը՝

Յակոր չորս տանձ ունէր. կէսը իր հօրեղբորը տուաւ. հիմա Յակոր քանի՞ տանձ ունի, եւ հօրեղբայրը քանի՞ տանձ ունի :

Ի՞նչ է չորսը.

Չորսն է 2, աւելի 2.



Չորսն է 3, աւելի 1.



Չորսն է 1, աւելի 3.



Չորսէն 2 հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Չորսէն 3 հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Չորսէն չորս հանեցէք. ի՞նչ կը մնայ :

Չորսէն հանեցէք 1, յետոյ 2. ի՞նչ կը մնայ :

Ի՞նչ է չորսին կէսը :

1ին վրայ քանի՞ աւելցնելով՝ 4 կ'ունենանք :

Քանի՞ կ'ունենանք, երբ 1ին վրայ 3 աւելցնենք,

2ին վրայ 2 աւելցնենք, 3ին վրայ 1 աւելցնենք :

4 ունենալու համար 2ին վրայ քանի՞ աւելցնելու է, 1ին վրայ քանի՞ աւելցնելու է :

Ի՞նչ է 4ին քառորդը, 4ին կէսը :


օրինակի համար՝ երկու հաւասար մասերու բաժնելով ազոց աչքին առջեւ : Միեւնոյն կերպով իր կարգին բացատրելու է նաեւ քառորդը :

# ՀԻՆԳ. 5

Չորսին վրայ ❁ ❁ ❁ ❁ աւելցնենք մէկ ❁.  
Կ'ունենանք հինգ ❁ ❁ ❁ ❁ ❁



Չորս տղայ. 4



Հինգ տղայ. 5

Կարգացէք եւ գրեցէք. 5 տանձ, 5 խնձոր, 5 կեռաս, 5 շաքար, 5 ընկոյզ, 5 սերկեւիկ, 5 ձմերուկ, 5 սեխ, եւ այլն:

Չորս տանձին վրայ եթէ մէկ տանձ ալ աւելցնենք, քանի՞ տանձ կ'ըլլայ:



Մէկ ձեռքիս մէջ երեք ընկոյզ ունիմ եւ միւսին մէջ 2 ընկոյզ. ամէնը քանի՞ ընկոյզ ունիմ:


Սաթենիկ 2 գրիչ ունի. քոյրը 1 գրիչ աւելի

ունի. քոյրը քանի՞ գրիչ ունի. երկուքը մէկտեղ քանի՞ գրիչ ունին :

Մաքրուհի 3 մատիտ ունի. եղբայրը 1 հատ պակաս ունի. եղբայրը քանի՞ մատիտ ունի. երկուքը մէկտեղ քանի՞ մատիտ ունին :

Վերդինէ հինգ ընկոյղ ունէր. 1 հատը կորսնցուց եւ 2 հատը կերաւ. քանի՞ ընկոյղ պակսեցաւ. հիմա քանի՞ ընկոյղ ունի :

Ի՞նչ է հինգը.

Հինգն է 4 աւելի 1. 

Հինգն է 2, աւելի 2, աւելի 1. 

Հինգն է 3, աւելի 2. 

Հինգէն հանեցէք 1. Ի՞նչ կը մնայ :

” ” 2. ” ”

” ” 3. ” ”

” ” 4. ” ”


5էն հանեցէք 2, յետոյ դարձեալ 2. Ի՞նչ կը մնայ : — 5ին մէջ քանի՞ հատ 1 կայ :

# ՎԵՑ. 6

Երեքին վրայ

երեք ալ աւերցնենք .

երեք, երեք ալ, կ'ընէ վեց :



Յուցուցէք ինձ վեց մատ, վեց սղայ, եւայլն :

Կարդացէք եւ գրեցէք. 6 ձի, 6 էջ, 6 ոչխար,  
6 այծ, 6 կով, 6 շուն, 6 կատու, 6 մուկ, 6  
ճանճ, 6 սղայ, եւայլն :



Վեց սղայ. 6

5 տանձին վրայ եթէ տանձ մըն ալ աւերցնեմ,  
քանի՞ տանձ կ'ըլլայ :



Քանի՞ կ'ընէ 5 եւ 1 : — 5 եւ 1 կ'ընէ վեց :

Նշան 6 խնձոր ունէր. 2 հատը կերաւ. քանի՞  
խնձոր ունի հիմա :


Ամէն մէկ ձեռքիս մէջ 3 ընկոյզ ունիմ. բոլորը քանի՞ ընկոյզ ունիմ:

Հայր մը իր 6 պղոց 6 տանձ բաժնել կ'ուզէ. ամէն մէկուն քանի՞ տանձ պիտի տայ:

Մայր մը կ'ուզէ իր երեք աղջիկներուն 6 կծիկ դերձան բաժնել. ամէն մէկը քանի՞ կծիկ պիտի առնէ:

Ի՞նչ է վեցը:

Վեցն է 2, աւելի 2, աւելի 2,



Վեցն է 3, աւելի քանի՞.



Վեցն է 4, աւելի՞ ”



Վեցն է 5, աւելի՞ ”



Զարուհի իր 6 ընկոյզները 3 հաւասար մասերու կը բաժնէ. ամէն մէկ մասին մէջ քանի՞ ընկոյզ կը դնէ:

Մարտիկ 6 ընկոյզ ունէր. 2 հատը եղբօրը տրուաւ. քանի՞ ընկոյզ մնաց իրեն:

Վեց ընկոյզ ունէի, կէսը կերայ. քանի՞ հատ կերայ եւ քանի՞ հատ մնաց:

Մայրս 1 օրուան մէջ մէկ շապիկ կը կարէ. 6 շապիկ կարելու համար քանի՞ օր աշխատելու է:

Մեսրոպ վեց տարու է. քոյրը անոր կէս տարիքն ունի. քոյրը քանի՞ տարու է. Մեսրոպ քրոջ մէն քանի՞ տարու մեծ է:

Քանի՞ կ'ընէ 2 անգամ 3.



Քանի՞ կ'ընէ 3 անգամ 2.



Քանի՞ կ'ընէ 6 անգամ 1.



Վեցէն 2 հանեցէք, — 3, հանեցէք, — 4 հանեցէք. ի՞նչ կը մնայ:



# ԵՍԹԸ. 7

Յին վրայ 1 աւելցնենք. 

6 եւ 1 կ'ընէ ԵՍԹԸ. 

Կարդացէք եւ գրեցէք. 7 հայելի, 7 դանակ,  
7 սերման, 7 պատառւորաղ, 7 սկաւառակ, 7 դըր-  
գայ, 7 սփռոց, 7 անձեռոց, եւ այլն :  
Եօթն է 3, աւելի 3, աւելի°

Եօթն է 6, աւելի° 

Եօթն է 4, աւելի° 

Եօթն է 3, աւելի° 

Նշան 7 հատ փայտէ մարդեր ունի. կ'ուզէ եր-  
կու կարգի վրայ շարել զանոնք. ի՞նչպէս ընելու է :



Կարապետ 7 տող դաս սովորեցաւ եւ 2 տողը  
մոռցաւ. հիմա քանի՞ տող գիտէ :

Ճամբորդութիւն մը ըրի որ մէկ շաբաթ տեւեց .  
քանի՞ օր կ'ընէ ասիկայ :


Բարսեղ 2 ընկոյզ ունի, Թորոս 3, եւ Համբար-  
ձում 2. բոլորը քանի՞ ընկոյզ կ'ընէ :

Պօղոս 7 տարու է. եղբայրը 4 տարու է. Պօղոս  
եղբորմէն քանի՞ տարու մեծ է :


Յակոբ 3 տարու է. քոյրը 4 տարու աւելի մեծ  
է. քոյրը քանի՞ տարու է :

# ՈՒԹ. 8

Ահա եօթը.  Աւելցնենք մեկ. 

եօթը, մեկ ալ, կ'ընէ ութ. 

Ուրիշ ի՞նչ կերպով կ'ընանք խումբերու բաժնել այս ութ կէտերը:

Չորս եւ չորս, կ'ընէ ութ. 

Ուրեմն ութն է 4 աւելի 4.

Նոյնպէս ութն է 4 անգամ 2.



6 աւելի 2  կ'ընէ ութ:

3, աւելի 3, աւելի 2, կ'ընէ ութ:




7ը, աւելի՞: — 3, աւելի՞: — 5, աւելի՞:

Կարգացէք եւ դրեցէք. 8 տանձենի, 8 խնձորենի, 8 սալորենի, 8 թթենի, 8 ընկուզի, 8 թզենի, 8 կեռասենի, եւ այլն:


Ցէն հանեցէք 4, — հանեցէք 6, — հանեցէք 2, — հանեցէք 5, — հանեցէք 3, — հանեցէք 1. ի՞նչ կը մնայ:

Ահա 8 կէտ. 

ասկէ հանեցէք 2 անգամ 3.  ի՞նչ կը մնայ:

Տէն հանեցէք 4 անգամ 2. Ի՞նչ կը մնայ :



Տէն հանեցէք 5 անգամ 1. 

Ի՞նչ կը մնայ :

Տէն հանեցէք 6 անգամ 1. 

Ի՞նչ կը մնայ :

Քանի՞ է 8 հացին կէսը :

Մեղքոն 5 խնձոր ունի. Ներսէս անկէ 2 խրնձոր պակաս ունի. քանի՞ խնձոր ունի Ներսէս, երկուքը մէկտեղ քանի՞ խնձոր ունին :

Յովսէփ 8 խնձոր ունի. 1 հատը եղբօրը կուտայ եւ 2 հատը քրոջը. քանի՞ հատ կը պակսի. քանի՞ հատ կը մնայ իրեն :



Յակոբ 4 ական թերթով 2 տետրակ պիտի չինէ. քանի՞ թերթ թուղթ առնելու է :

Ամէն մէկ ձեռքիս մէջ 4 գրիչ ունիմ. ամէնը քանի՞ գրիչ կ'ընէ :

# Ի Ն Ր . 9

Ցին վրայ 1 աւելցնենք, պիտի ունենանք ի՞նք :



Այս կէտերով կրնա՞նք ուրիշ կերպ խումբեր կազմել :

Ինն է 3, աւելի 3, աւելի՞ :



Ինն է 6, աւելի՞ . — Ինն է 4, աւելի՞ : — Ինն է 5, աւելի՞ : — Ինն է 7, աւելի՞ : — Ինն է 8, աւելի՞ :

Կարդացէք եւ գրեցէք . 9 վարդ, 9 մանուշակ, 9 մեխակ, 9 շահպրակ, 9 շուշան [զամկազ], 9 արեւածաղիկ, 9 երիցուկ [փափաքիա], եւ այլն :

Իճճէն հանեցէք 6, — հանեցէք 3, — հանեցէք 4, — հանեցէք 5, — հանեցէք 1 . Ի՞նչ կը մնայ : Նշան 5 խնձոր ունի . Մկրտիչ 1 խնձոր պակաս ունի . քանի՞ խնձոր ունի Մկրտիչ . երկուքը մէկտեղ քանի՞ խնձոր ունին :

Համբարձում 9 նուշ ունէր . 3 հատը կերաւ եւ 3 հատը իր եղբորը տուաւ . քանի՞ հատ պակսեցաւ . քանի՞ հատ մնաց :

Գալուստ օրը 3 երես գիր կրնայ գրել. քանի՞ օրէն պիտի կրնայ գրել 9 երես գիրը:

Մենիկ 9 ընկոյզ ունի. 3 մասի կը բաժնէ. առաջին մասին մէջ կը դնէ 2 ընկոյզ, երկրորդ մասին մէջ 1 ընկոյզ աւելի կը դնէ. երրորդ մասին մէջ երկրորդէն 1 ընկոյզ աւելի կը դնէ. ամէն մէկ մասին մէջ քանի՞ ընկոյզ կայ:

0 0 0 0 0 0 0 0

Յովսէփ 9 թերթ թուղթի ունի. կ'ուզէ երկու տետրակ շինել. տետրակները քանի՞ կան թերթ պիտի ունենան:

Շապիկ մը շինելու համար 2 կանգուն կտաւ պէտք է. քանի՞ շապիկ կը շինուի 9 կանգուն կտաւով:

Քանի՞ կը մնայ, երբ 9էն 1 հանեմ, 2 հանեմ, 3 հանեմ, 4 հանեմ, 5 հանեմ, 6 հանեմ, 7 հանեմ, 8 հանեմ, 9 հանեմ:

Գարեգին սեղանին վրայ 9 ընկոյզ ունէր. ամէն մէկ ձեռքին մէջ 14 հատ առաւ. սեղանին վրայ քանի՞ հատ մնաց:

Յին կէսը քանի՞ է: — 9ին կէսը:



ՔԱՂՈՒԱՄՔ

<i>Թիւեր</i>		<i>Թուանշաններ</i>
Մէկ	0	1
Երկու	0 0	2
Երեք	0 0 0	3
Չորս	0 0 0 0	4
Հինգ	0 0 0 0 0	5
Վեց	0 0 0 0 0 0	6
Եօթը	0 0 0 0 0 0 0	7
Ութ	0 0 0 0 0 0 0 0	8
Ինը	0 0 0 0 0 0 0 0 0	9

1 2 3 4 5 6 7 8 9

Մէկ Երկու Երեք Չորս Հինգ Վեց Եօթը Ութ Ինը

**Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ո Ն**

1. Արտասանեցէք թիւերը մէկէն մինչեւ ինը ,  
յետոյ հակադարձը , այսինքն իննէն մինչեւ մէկ :

2. Համրեցէք պատուհանին ապակիները :

3. Համրեցէք ձեր աջ ձեռքին մատները :

4. Համրեցէք առաջին գրասեղանին վրայ նըս-  
տող աշակերտները :

5. Համրեցէք դասարանին պատուհանները :

6. Համրեցէք պատէն կախուած աշխարհա-  
ցոյցերը :

7. Քանի՞ գիր կայ տեսրակ բառին մէջ :

8. Քանի՞ գիր կայ Սաքեւնիկ բառին մէջ :

9. Համրեցէք ձեր թիկնոցին կոճակները :

10. Գրել թիւերը մէկէն մինչեւ ինը , նախ գը-  
րերով , յետոյ թուանշաններով :

11. Թուանշաններով գրել հետեւեալ թիւերը .  
ուրբ բարի նիշ , հիւնզ տետրակ , երեւ կարկանդակ ,  
վեց սեղան , ինը մատիտ , երկու կոչիկ , եւայլն :

12. Թուանշաններով գրել թիւերը երեքէն մին-  
չեւ ութ , հինգէն մինչեւ ինը , երկուքէն մինչեւ  
եօթը , եւայլն :

13. Համրել 2 առ 2 մինչեւ 8 , սկսելով 2էն :

14. Համրել 2 առ 2 մինչեւ 9 , սկսելով 1էն :

15. Մենիկ 3 խնձոր առաւ հօրմէն . քոյրը 1  
խնձոր պակաս առաւ . քոյրը քանի՞ խնձոր ունի :

16. Ամէն մէկ ձեռքիս մէջ 2 ընկոյզ ունիմ. ամէնը քանի՞ ընկոյզ ունիմ :

17. Նուարդ 4 խնձոր ունի. Վերգինէ անոր կէսին չափ ունի. քանի՞ խնձոր ունի Վերգինէ :

18. Մաքրուհի 4 տանձ ունէր. կէսը իր հօրեղբորը տուաւ. հիմա ամէն մէկը քանի՞ տանձ ունի :

19. Գոհարիկ 4 ընկոյզ ունէր. 3 հատը կերաւ. քանի՞ հատ մնաց :

20. Իին վրայ քանի՞ աւելցնելով 4 կ'ունենանք :

21. Քանի՞ կ'ունենանք, երբ 1ին վրայ 3, 2ին վրայ 2, 3ին վրայ 1 աւելցնենք :

22. 4 ունենալու համար 2ին վրայ քանի՞ աւելցնելու է, 1ին վրայ քանի՞ աւելցնելու է :

23. Սաթենիկ 2 գրիչ ունի. քոյրը 1 գրիչ աւելի ունի. երկուքը մէկտեղ քանի՞ գրիչ ունին :

24. Մէկ ձեռքիս մէջ 3 ընկոյզ ունիմ եւ միւսին մէջ 2. ամէնը քանի՞ ընկոյզ կ'ընէ :

25. Մաքրուհի 3 մատիտ ունի. եղբայրը 1 հատ պակաս ունի. երկուքը մէկտեղ քանի՞ մատիտ ունին :

26. Վերգինէ 5 ընկոյզ ունէր. 1 հատը կորսնցուց եւ 2 հատը կերաւ. քանի՞ հատ մնաց :

27. Սաթենիկ 5 խնձոր ունէր. 1 հատը եղբորը տուաւ եւ մնացածին կէսը քրոջը տուաւ. դեռ քանի՞ խնձոր ունի :

28. Նշան 6 խնձոր ունէր. 2 հատը կերաւ. քանի՞ խնձոր ունի հիմա :



29. Ամէն մէկ ձեռքիս մէջ 3 ընկոյզ ունիմ. բո-  
լորը քանի՞ ընկոյզ ունիմ :

30. Հայր մը իր 6 տղոց 6 տանձ բաժնել կ'ու-  
զէ . ամէն մէկ տղայ քանի՞ տանձ պիտի ընդունէ :

31. Մայր մը կ'ուզէ իր երեք աղջիկներուն 6  
կծիկ թել բաժնել . ամէն մէկը քանի՞ կծիկ պիտի  
առնէ :

32. Զարուհի իր 6 ընկոյզները 3 հաւասար մա-  
սերու կը բաժնէ . ամէն մէկ մաս քանի՞ ընկոյզ կը  
պարունակէ :

33. Մեսրոպ 6 տարեկան է . քոյրը անոր կէս  
տարիքն ունի . Մեսրոպ քրոջմէն քանի՞ տարու աւե-  
լի մեծ է :

34. Մայրս 1 օրուան մէջ 1 շապիկ կը կարէ . 6  
շապիկ կարելու համար քանի՞ օր աշխատելու է :

35. Մարտիկ 6 ընկոյզ ունէր . 2 հատը եզրօրը  
տուաւ . քանի՞ ընկոյզ մնաց իր քով :

36. Կարապետ 7 հատուած դաս սովրեցաւ եւ  
2 հատուածը մոռցաւ . հիմա քանի՞ հատուած դիտէ :

37. Գարեգին սեղանին վրայ 7 ընկոյզ ունէր .  
ամէն մէկ ձեռքին մէջ 3 հատ առաւ . սեղանին վը-  
րայ քանի՞ հատ մնաց :

38. Ճամբորդութիւն մը ըրի օր մէկ շաբաթ  
տեւեց . քանի՞ օր ճամբորդեցի :

39. Մինաս 7 տարու է . եղբայրը 4 տարու է .  
Մինաս եղբորմէն քանի՞ տարու աւելի մեծ է :

40. Բարեկէն 2 ընկոյզ ունի, Թորոս 3 եւ Համբարձում 2. բոլորը քանի՞ ընկոյզ կ'ընէ :

41. Աշոտ 3 տարեկան է. քոյրը 4 տարու անց մեծ է. քոյրը քանի՞ տարու է :

42. Երկու ճամբորդութիւն ըրի. մին 3 օր տեւեց, միւսը 4 օր. քանի՞ օր ճամբորդութիւն ըրած եմ :

43. Մելքոն 5 խնձոր ունի. Ներսէս անկէ 2 խնձոր պակաս ունի. քանի՞ խնձոր ունի Ներսէս. երկուքը մէկտեղ քանի՞ խնձոր ունին :

44. Յովսէփ 8 խնձոր ունի. 1 հատը եղբորը կուտայ և 2 հատը քրոջը. իրեն քով քանի՞ հատ կը մնայ :

45. Նիկողոս 4 ական թերթով 2 տետրակ պիտի շինէ. քանի՞ թերթ թուղթ ունենալու է :

46. Ամէն մէկ ձեռքիս մէջ 4 գրիչ ունիմ. բոլորը քանի՞ գրիչ կ'ընէ :

47. Նշան 5 խնձոր ունի. Մկրտիչ 1 խնձոր պակաս ունի. քանի՞ խնձոր ունի Մկրտիչ. երկուքը մէկտեղ քանի՞ խնձոր ունին :

48. Յովհաննէս 9 ընկոյզ ունի. 3 մասի կը բաժնէ. առաջին մասը կը պարունակէ 2 ընկոյզ, երկրորդ մասը 1 ընկոյզ անելի կը պարունակէ, եւ երրորդ մասը երկրորդէն 1 ընկոյզ անելի կը պարունակէ. ամէն մէկ մասին մէջ քանի՞ ընկոյզ կայ :

49. Քանի՞ օրէն 9 հատուած դաս պիտի սովորիս, եթէ օրը 3 հատուած միայն կրնաս սովորիլ :

50. Յոսկէփ 9 թերթ թուղթ ունի. կ'ուզէ ա- նոնցմով 2 տետրակ շինել. ամէն մէկ տետրակը քանի թերթ թուղթ պիտի պարունակէ :

51. Քանի՞ շապիկ կրնանք շինել 9 կանգուն կտաւով, եթէ մէկ շապիկի համար 2 կանգուն կը- տաւ պէտք ըլլայ :

52. Համբարձում 9 նուշ ունէր. 3 հատը կերաւ եւ 3 հատը եղբորը տուաւ . քանի՞ հատ մնաց իրեն : — Առաջին թուոյն քանի՞ երորդ մասը մնաց :

53. Քանի՞ աւելցնելու եմ Ցին, 7ին, 6ին, . . . վրայ, 9 ունենալու համար :

54. Քանի՞ կը մնայ, երբ 9էն 1, 2, 3 . . . 8 հաննէք : Քանի՞ կը մնայ, երբ 9էն 9 հաննէք :

+ ԵՒ = ՆՇԱՆՆԵՐԸ

+ կը նշանակէ աւելի :

= կը նշանակէ հաւասար :

3+2=5 կը կարդացուի՝ 3 աւելի 2 հաւասար 5 :

Ասիկա կը նշանակէ թէ 3ին վրայ եթէ 2 աւելցը- նենք, 5 կ'ունենանք :

Իրարու վրայ աւելցուցէք սա թիւերը, եւ ինչ որ գտնէք, = նշանին առջեւ գրեցէ՛ք.

3+2= | | | | | =5

3+3= =

4+4= =

4+3= =

$3+4=$

$6+3=$

$5+4=$

$3+5=$

$2+4=$

$1+8=$

=

=

=

=

=

=

Հետեւեալ թիւերն իրարու վրայ աւելցուցէ՛ք՝ տա՛նց գիծերը քաշելու, եւ անմիջապէս արդիւնքը գը՛րեցէ՛ք.

$4+2=6$

$4+3=$

$5+3=$

$2+6=$

$5+1=$

$2+7=$

$3+4=$

$4+5=$

$6+2=$

$3+6=$

$2+5=$

$4+4=$

$3+2=$

$1+4=$

$2+2+2=6$

$3+3+1=$

$4+3+2=$

$5+2+1=$

$6+1+2=$

$1+3+4=$

$2+4+3=$

---

— Ն Շ Ա Ն Ը

— այս նշանին անունն է պակաս :

3—1 կը կարդացուի 3 պակաս 1, եւ կը նշանակէ թէ 3 էն 1 պիտի պակսեցնենք :

3—1=2 կը կարդացուի՝ 3 պակաս 1 հաւասար 2. ասիկայ կը նշանակէ թէ, եթէ 3 էն 1 պակսեցնենք, կը մնայ 2 :

**ՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

3-1= || | էն հանել | =2

4-1= =

5-2= =

7-3= =

6-3= =

8-2= =

9-6= =

7-3= =

5-4= =

5-2-2= 5էն հանել 2, յետոյ գարձեալ 2=1

8-5-2= =

7-2-3= =

9-4-3= =

7-3-2= =

9-8=1      8-5=      5-2=

7-3=      9-8=      8-5=

9-5=      6-3=      7-6=

8-4=      9-3=      8-2=

9-4=      5-3=      5-4=

6+3-5=      8-5-1=      6+3-1=

7-3-2=      9-4-3=      9-9+8=

8-4-2=      7-1-4=      5+4-5=

9-5-1=      6-2-3=      9-8+8=

8-6-2=      5-1-4=      4-4+6=

3+5-6=      4+5-4=      5+4-2=[1]

(1) Ուսուցիչն այսօրինակ ուրիշ վարժութիւններ եւս ընել տալու է։  
Նախ ծանր ծանր եւ որոշ կերպով ըսելու է « 6 էվել 4, պակաս 5 », եւ  
պահանջելու է որ անմիջապէս պատասխանեն :



# 0

Ատր անունն է ԶԻՌՕ :

ԶԻՌՕ կը նշանակէ ՈՉԻՆՉ :

2 ընկոյզ ունէի . առաջ 1 հատը կերայ , մնաց 1 հատ . ետքէն այս 1 հատն ալ կերայ , ոչիկն մնաց , այսինքն բան չի մնաց : Ասիկայ նշանով մը հասկըն- նելու համար կը գրեմ՝ Օ :

## Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

5 ընկոյզ ունէի , 2 հատը կերայ . քանի՞ հատ մնաց : Մնացած 3 ընկոյզը քրոջս տուի . ի՞նչ մնաց քովս : Ոչիկն : Ի՞նչպէս պիտի գրենք ասիկայ :

8 զրուշ ունէի , Պօղոսին տուի . քովս ի՞նչ մնաց : Ոչիկն : Ի՞նչ նշանով պիտի գրենք այս ոչիկնը :

Տանձ մը ունէի , կերայ . հիմա քանի՞ տանձ ու- նիմ : Ի՞նչ նշան պիտի գրեմ , հասկցնելու համար թէ ա՛լ տանձ չունիմ :

1 տանձին վրայ քանի՞ տանձ աւելցնելու է՞ 2 տանձ ունենալու համար : — Քանի՞ հատ ուտեմ նէ՞ 0 կը մնայ :

2 նուշ ունիմ . մէկ հատը՝ ուտեմ նէ , քանի՞ նուշ կը մնայ : Մէկ հատ ալ ուտեմ նէ՞ :

Ի՞նչ է զէրօյին արժէքը :

Ի՞նչ կ'ընէ 1 + ոչինչ : — Ի՞նչ կ'ընէ ոչինչ + 1 :  
 Ի՞նչ կ'ընէ 5 + 0 : — Ի՞նչ կ'ընէ 0 + 4 :

3—3=

4—2—2=

8—8=

9—9=

5—3—2=

4—4=

5—5=

2+7—9=

1—1=

**ՊԱՐԳ ՀԱՇՎՈՒՆԵՐ (7)**

Պատկեր մը 1 զրուշ[<sup>2</sup>] արժէ նէ, երկու պատկեր քանի՞ զրուշ կ'արժեն :

Օննիկ 2 զրուշ ունի. եթէ մէկ զրուշը կորսնցընէ, քանի՞ զրուշ կը մնայ : — Եթէ 2 զրուշն ալ կորսնցնէ, քանի՞ զրուշ կը մնայ :

Մարգար 2 թուղթ դաս սովրեցաւ. իր քոյրը 1 թուղթ աւելի սովրեցաւ. քանի՞ թուղթ սովրեցաւ քոյրը :

[1] Տղայք պարտին այս խնդիրները բանաւոր կերպով կատարել : Միայն խնդրոց մէջ եղած թուանշանները գրելու են տախտակին վրայ : Տղոց՝ թիւերու արժէից յստակ գաղափարը տալու եւ անոնց բազադրութիւնները իրենց հասկցնելու համար, վերացեալ բացատրութիւններ պէտք չէ տալ . առարկայից դէմ յանդիման տեսութիւնը՝ կամ թէ ըսենք՝ իրատեսութիւնը միայն պէտք է գործածել : Սակայն, երբ տղան ալ եւս առանց իրատեսութեան կարող է ըմբռնել թիւերը, պէտք չէ շարունակել զայն :

[2] Տղուն հասկցնել թէ ի՞նչ բան է զրուշ ըսուածը, եւ այս առթիւ դրամի գաղափարը տալ :

Այլքսան քանի՞ գրաքար կրնայ գնել 2 զրուչով,  
եթէ 1 գրաքարը 1 զրուչ արժէ :

Աւետիս 1 զրուչ ունի . եղբայրն ունի իրեն երկու անգամը . եղբայրը քանի՞ զրուչ ունի :

Գրիգոր 2 զրուչ ունի . եղբայրը 2 զրուչ պակաս ունի . եղբայրը քանի՞ զրուչ ունի :

Վիքթոր 2 զրուչ տուաւ , եւ եղբայրը 1 զրուչ պակաս . եղբայրը քանի՞ զրուչ ունի :

Ինն կրկինը<sup>[1]</sup> ի՞նչ է : — Զին կէսը ի՞նչ է :

Մինաս 1 զրուչնոց մը եւ 2 զրուչնոց մ' ունի . քանի՞ զրուչ ունի ամէնը :

Գալուստ 2 քոյր ունի . մին 1 տարեկան է , միւսը 2 տարու աւելի է . միւս քոյրը քանի՞ տարու է :

Գառնիկ 3 զրուչ ունի . 2 զրուչի թուղթ գրիչ գնեց . քանի՞ զրուչ մնաց իրեն քով :

Մինրանին հայրը աղքատի մը 2 զրուչ տուաւ . եւ ուրիշ աղքատի մ' ալ 1 զրուչ . ամէնը քանի՞ զրուչ տուաւ :

Մէկ պատկերը 1 զրուչ կ'արժէ . քանի՞ զրուչ կ'արժէ 3 պատկերը :

Մէկ խաղալիքը 3 զրուչ կ'արժէ , 1 պատկերը 3 անգամ քիչ կ'արժէ . մէկ պատկերը քանի՞ զրուչ կ'արժէ :

---

[1] Նօտր գրով գրուած բառերը բացատրել :



Մարդին քանի՞ պատկեր կրնայ գծել 3 դրուշով, եթէ պատկերը 1 դրուշ արժէ :

Վերդինէ քանի՞ տետրակ կրնայ գնել 3 դրուշով, եթէ 1 տետրակը 1 դրուշ արժէ :

Օճորի 3 դրուշ ունէր . 1 դրուշով տանձ գնեց եւ 2 դրուշով կաղին գնեց . իրեն քով քանի՞ դրուշ մնաց :

Վերթոր 3 խաղալիք պիտի առնէ . 1 խաղալիքը 1 դրուշ կ'արժէ . քանի՞ դրուշ պիտի տայ :

Մաննիկ 2 թուղթ դաս սովորեցաւ . իր քոյրը աւոր կրկինը սովորեցաւ . քոյրը քանի՞ թուղթ սովորեցաւ :

Եթէ 1 շիշ մեկանը 2 դրուշ արժէ , 2 շիշ մեկանը քանի՞ դրուշ կ'արժէ :

Չին վրայ ի՞նչ թիւ աւելցնելու է՝ 3 ունենալու համար :

Չէն քանի՞ հանելու է՝ 1 ունենալու համար :

1ին վրայ քանի՞ աւելցնելով 3 կ'ունենանք :

1+2 ի՞նչ կ'ընէ : 2+1 ի՞նչ կ'ընէ :

Քանի՞ կ'ընէ 3.—1 : Քանի՞ կ'ընէ 3—2 :

1ին եռապատիկն ի՞նչ է :

2ին երրորդ [1] մասն ի՞նչ է : Ի՞նչ է 3ին կէսը :

---

[1] Բացատրել երրորդ մաս , հիկնգերորդ մաս , եւ այլն , բառերը , առարկայ մը երեք , հիկնգ , եւ այլն , հասար մասերու բաժնելով :

Արուսեակ 4 գրուչ ունէր . 1 դրուչը կորսնցուց .  
քանի՞ դրուչ մնաց :

Աղանի իր մօրմէն 2 հատ 2 դրուչնոց սուսա .  
քանի՞ դրուչ ունի :

Եթէ 1 պատկերը 1 դրուչ արժէ , 4 պատկերը  
քանի՞ դրուչ կ'արժէ :

Եթէ 1 կաղամարը 1 դրուչ արժէ , քանի՞ կա-  
ղամար կրնանք գնել 4 դրուչով :

4ին մէջ քանի՞ անգամ 2 կայ . քանի՞ անգամ  
1 կայ :

Եթէ մէկ հացը 1 դրուչ ըլլայ , քանի՞ հաց կըր-  
նանք գնել 4 դրուչով :

Գէորգ 2 հատ 2 դրուչնոց սուսա՝ թաչկինակ  
մը գնելու համար , եւ 1 դրուչ ետ առաւ . թաչկի-  
նակը քանի՞ դրուչ արժեց :

Տուփ մը գրչածայրը 2 դրուչ կ'արժէ . ի՞նչ  
կ'արժէ 2 սուփը :

Երկու զոյգ գուլպան 4 դրուչ կ'արժէ . ի՞նչ  
կ'արժէ 1 զոյգ գուլպան :

Ի՞նչ է 2ին կրկիկը : Ի՞նչ է 1ին քառապասիկը :  
4ը ո՞ր թուոյն կրկիկն է եւ ո՞ր թուոյն քառա-  
պասիկն է :

2ը ո՞ր թուոյն կենն է :

1ը ո՞ր թուոյն չորրորդ մասն է :



Մէկ օխա կաղինը 4 զրուշ կ'արժէ . քանի՞ զրուշ կ'արժէ կէս օխան, քառորդ օխան [1] :



Կշիռ

Բիւզանդ 5 զրուշնոց մ'ունի, եղբայրը 2 հատ 2 զրուշնոց եւ 1 զրուշնոց մ'ունի . ո՞վ արեւի գրամ ունի :

Յարութիւն 5 զրուշ ունի . քանի՞ հատ 1 զրուշնոց հաց կրնայ գնել :

Թափիկ 2 խնձոր ունի . 2 հատ Գրիգոր ունի, եւ Ալիքսան Գրիգորէն 1 խնձոր պակաս ունի . արժէնք քանի՞ խնձոր կ'ընէ :

---

[1] Բացատրել թէ ի՞նչ է կշիռը եւ ի՞նչպէս կը գործածուի :

Եթէ 1 հացը 1 դրուշ արժէ, 5 դրուշով քանի՞ հաց կրնանք գնել:

Եթէ 1 պատկերը 1 գրուշ արժէ, քանի՞ դրուշ կ'արժէ 5 պատկերը:

Ներսէս 2 թռչուն գնեց եւ 5 դրուշ տուաւ վաճառականին, որ իրեն 1 դրուշ ետ տուաւ. ի՞նչ արժեց 1 թռչունը:

Յակոբ 2 դրուշով տետրակ մը գնեց, 2 դրուշով շիշ մը թանաք, եւ 1 դրուշով գծոց մը. ամէնը քանի՞ դրուշ ծախսեց:

× ՆՇԱՆԸ

Ասիկայ նշան մ'է որ կը գործածուի անգամ բառին տեղ:

$5 \times 1$  կը նշանակէ 5 անգամ 1, 5 հնս 1:

$5 \times 1 =$  կը նշանակէ թէ 5 հնս 1ին քանի՞ րանելը հասկնալ կ'ուզուի: 5 հնս 1, կամ թէ ըսենք, 5 անգամ 1 կ'ընէ 5: Ուրեմն = նշանին առջեւը 5 գրելու է, այսպէս.  $5 \times 1 = 5$ : Ասիկայ կը կարդացուի՝ 5 անգամ 1 հարասար 5:

Գտէք հետեւեալ հարցումներուն պատասխանները<sup>[1]</sup>.

[1] Ուսուցիչը թուոց բազում բաղադրութիւններ առաջարկելու է հետզհետէ զորս տղայք մէկ կողմանէ պարտին լուծել: Օրինակ.  $[1+2+1-1-1+2-3+2+1-4]=0$ : Վերջին թիւն արտասանուածին պէս՝ տղան

$$1+1+1+1+1=\dots: 5 \times 1=\dots \quad 5-1-1-1-1=\dots:$$

$$2+2+2-1=\dots \quad 2 \times 2+1=\dots \quad 5-3-2=\dots:$$

$$3+2=\dots \quad 2+3=\dots: 1 \times 3+2=\dots:$$

$$5-3=\dots: 5-2=\dots: 5-1=\dots:$$

$$4+1=\dots: 1+4=\dots: 1 \times 4+1=\dots: 5-4=\dots:$$

4ին, 3ին, 2ին, 1ին վրայ ինչ թիւ աւելցնելու է՝  
5 ունենալու համար:

5էն ինչ թիւ հանելու է՝ 4, 3, 2, 1 ունենալու համար:

Քանի՞ կ'ընէ 1+4, 2+3, 3+2, 4+1:

Քանի՞ կ'ընէ 5-1, 5-2, 5-3, 5-4, 5-5:

Քանի՞ կ'ընէ 5-2×1, 5-3×1, 5-4×1:

Քանի՞ կ'ընէ 1×1+1, 2×1+1, 3×1+1, 4×1+1.

Քանի՞ կ'ընէ 1×5, 5×1, 2×2+1:

1ին հնգապատիկն ինչ է: 1ը ո՞ր թուոյն հիկնգերորդ մասն է:

---

գործողութեան արդիւնքն ունենալու է: Միակ տղայ մը պէտք է պատասխանէ. իւր ընկերներէն անոնք որ մի եւ նոյն արդիւնքը գտած են, կը բարձրացնեն իրենց ձեռքը՝ ցուցնելու համար թէ գտնուած պատասխանը ճիշդ է: Այս միջոցը տղան միշտ ուշադիր կը պահէ եւ ընդմիջմանց առաջքը կ'առնու: Այս հրահանգները պէտք է շարունակուին մինչեւ որ տղան առանց գժուարութեան զանոնք կատարէ: Մէկ աստիճանէն միւսին անցնելու չէ մինչեւ որ իմացականութիւնը բաւական չի զարգանայ: Որչափ յամր երթան տղայք, յառաջդիմութիւնն այնքան արագ կ'ըլլայ: Իմացականութիւնը տունկի մը կը նմանի. կը զարգանայ, բայց անզգալի կերպով, եւ իւր օրէնքներն արհամարհել է՝ անկէ խիստ արագ զարգացում մը պահանջելը:

ՊԱՐՁ ՀԱՇՒՆՆԵՐ

3 հատ 2 զրուչնոցը քանի՞ զրուչ կ'ընէ :

Հայր մը Գառնիկին թերթ մը թուղթ կուտայ :  
Յողման Գառնիկէն 1 թերթ աւելի կ'ընդունի եւ  
Պետրոս Յողմանէն 1 թերթ աւելի . քանի՞ կան թերթ  
թուղթ ունին . երեքը մէկտեղ քանի՞ թերթ թուղթ  
ունին :

Յարութիւն 6 ծաղիկ ունի . կէսը իր մօրը կու-  
տայ եւ մնացածին երրորդ մասը իր հօրը . իրեն  
քանի՞ ծաղիկ կը մնայ :

Մէկ օխա խնձորը 3 զրուչ կ'արժէ . քանի՞ զր-  
ուչ կ'արժէ 2 օխան . քանի՞ զրուչ կ'արժէ կէս  
օխան :

Մէկ օխա խաղողը 2 զրուչ կ'արժէ . քանի՞ զր-  
ուչ կ'արժէ 2 օխան . քանի՞ զրուչ կ'արժէ 3 օխան :

6 զրուչով քանի՞ պատկեր կրնանք գնել , եթէ  
1 պատկերը 3 զրուչ արժէ :

Քանի՞ խաղալիք կրնանք գնել 6 զրուչով , եթէ  
1 խաղալիքը 2 զրուչ արժէ :

Յին մէջ քանի՞ հատ 2 կայ :

6 խնձոր ունիմ . ձեր երեքին մէջ պիտի բաժ-  
նեմ .



**Քանի՞ կան խնձոր պիտի ունենանք :**



6 կանգուն կտաւով քանի՞ շապիկ կը շինուի, եթէ 1 շապիկ շինելու համար 2 կանգուն կտաւ պէտք ըլլայ :

Յին մէջ քանի՞ անգամ 3 կայ :

6 զրուշով քանի՞ գաւաթ կրնանք գնել, եթէ 1 գաւաթը 3 զրուշ արժէ :

Մանուկ թաշկինակ մը գնեց 2 զրուշով, եւ 2 հատ ալ սանտր գնեց՝ հատը 2 զրուշի. ո՞րչափ կը պարտի :

Յարութիւն 3 օր հիւանդ եղաւ, Մկրտիչ 2 անգամ աւելի օր. Մկրտիչին հիւանդութիւնը քանի՞ օր տեւեց :

Մէկ զմեղինը 2 զրուշ կ'արժէ. 3 զմեղինը քանի՞ զրուշ կ'արժէ :

$$1+1+1+1+1+1 = \dots : 6 \times 1 = \dots : 6-1 = \dots :$$

$$6-1-1-1-1-1 = \dots :$$

$$2+2+2 = \dots : 3 \times 2 = \dots : 6-2-2 = \dots :$$

$$3+3 = \dots : 2 \times 3 = \dots : 6-3 = \dots : 6-2 = \dots :$$

$$4+2 = \dots : 2+4 = \dots : 1 \times 4+2 = \dots : 6-4 = \dots :$$

$$5+1 = \dots : 1+5 = \dots : 1 \times 5+1 = \dots : 6-5 = \dots :$$

$$\text{Ի՞նչ կ'ընէ } 1+5. 2+4. 3+3. 4+2. 5+1 :$$

$$\text{Ի՞նչ կ'ընէ } 6-1. 6-2. 6-3. 6-4. 6-5 :$$

5ին վրայ	քանի՞	աւելցնելու է որ 6 ունենամ:
4ին	»	» է որ 6 »
3ին	»	» է որ 6 »
2ին	»	» է որ 6 »
1ին	»	» է որ 6 »

6էն	քանի՞ հանելու է որ 5 ունենամ:
6էն	» » է որ 4 »
6էն	» » է որ 3 »
6էն	» » է որ 2 »
6էն	» » է որ 1 »
6էն	» » է որ 0 »

Քանի՞ կը մնայ, երբ 6էն  $2 \times 1$ .  $3 \times 1$ .  $4 \times 1$ .  $5 \times 1$  հանենք:

Ի՞նչ կ'ընէ  $2 \times 2 + 2$ .  $1 \times 2 + 2 \times 2$ :

1ին վեց անգամը, 2ին եռապատկը, 3ին կրկինն ի՞նչ է:

Խաչիկ 5 զրուշնոց մը եւ 2 զրուշնոց մ'առաւ. Պուրէն 3 հատ 2 զրուշնոց եւ 1 զրուշնոց մ'առաւ. ո՞վ աւելի դրամ ունի:

Հայր մ'իր երկու որդիներէն ամէն մէկուն 2 զրուշնոց մը կուտայ, եւ իր երեք աղջիկներէն ամէն մէկուն 1 զրուշ. ամէնք քանի՞ զրուշ կ'ընէ:


Եթէ մէկը օրը 1 զրուշ խնայէ, մէկ շաբթուան մէջ քանի՞ զրուշ խնայած կ'ըլլայ:

Մէկ պատկերը 1 զրուշ կ'արժէ. քանի՞ զրուշ կ'արժէ 7 պատկերը:




Մէկ օխա խնձորը 2 դրուշ կ'արժէ . քանի՞ օխա  
խնձոր կ'առնուի 7 դրուշով :

Մէկ ձմերուկը 2 դրուշ կ'արժէ . քանի՞ ձմերուկ  
կրնանք գնել 7 դրուշով :



Անա 3 գիրք մէկ կարգի վրայ  
եւ 4 գիրք ուրիշ կարգի մը  
վրայ :

Չանոնք ամէնքը մէկ կարգի  
վրայ կը բաւեն, համեւելով  
1, 2, 3, 4, եւայլն :



Կը տեսնե՞ն, մէկ կարգի վրայ դի 7 գիրք (գումար) :

Մէկ կարկանդակը 3 դրուշ կ'արժէ . քանի՞ կար-  
կանդակ կրնանք գնել 7 դրուշով :

7 կանգուն կտաւով քանի՞ շապիկ կը յնուի,  
եթէ մէկ շապիկի համար 2 կանգուն կտաւ պէտք  
ըլայ:



7 կարկանդակ ունիմ .



Շունը կերաւ 3 հաս .

Ինձի մնաց 4 հաս :

Ներսէս 7 զրուշ ունէր, 5 զրուշը կորսնցուց .  
քանի՞ զրուշ ունի հիմա :

$1+1+1+1+1+1+1=\dots$ ;  $7 \times 1=\dots$ ;  
 $7-1-1-1-1-1-1=\dots$ ;  $7-2-2-2=\dots$ ;  
 $2+2+2+1=\dots$ ;  $3 \times 2+1=\dots$ ;  
 $3+3+1=\dots$ ;  $2 \times 3+1=\dots$ ;  $7-3-3=\dots$ ;  
 $4+3=\dots$ ;  $3+4=\dots$ ;  $1 \times 4+3=\dots$ ;  
 $7-4=\dots$ ;  $7-3=\dots$ ;  $7-2=\dots$ ;  $7-1=\dots$ ;  
 $5+2=\dots$ ;  $2+5=\dots$ ;  $1 \times 5+2=\dots$ ;  $7-5=\dots$ ;  
 $6+1=\dots$ ;  $1+6=\dots$ ;  $1 \times 6+1=\dots$ ;  $7-6=\dots$

Ճիշտ վրայ՝ քանի՞ աւելցնելու է որ 7 ունենամ:

5ին » » » է որ 7 »

4ին » » » է որ 7 »

3ին » » » է որ 7 »

2ին » » » է որ 7 »

1ին » » » է որ 7 »

7էն քանի՞ հանելու է որ 6 ունենամ:

7էն » » է որ 5 »

7էն » » է որ 4 »

7էն » » է որ 3 »

7էն » » է որ 2 »

7էն » » է որ 1 »

7էն 1 հանեմ նէ, ի՞նչ կը մնայ:

7էն 2 » » »

7էն 3 » » »

7էն 4 » » »

7էն 5 » » »

7էն 6 » » »

Քանի՞ կ'ընէ  $2 \times 1 + 5$ ,  $2 \times 3 + 1$ ,  $1 \times 7$ ,  $7 \times 1$ :

Եթե երկու անգամն ի՞նչ է:

7ին երկուսուրդ մասն ի՞նչ է:

Մենիկ ստացաւ 4 հատ 2 զրուշնոց . քանի՞ զըրուշ ունի :

Սիմոն 8 ծաղիկ ունի . կէսը իր մօրը կուտայ եւ քառորդը իր հօրը . իրեն քանի՞ ծաղիկ կը մնայ :

Սահակ 8 կաղին ունի եւ կ'ուզէ զանոնք 4 հաւաքաւ մասերու բաժնել . ամէն մէկ մաս քանի՞ կաղին պիտի պարունակէ :

Եթէ մէկ պատկերը 1 զրուշ արժէ , 8 պատկերը քանի՞ զրուշ կ'արժէ :

8 զրուշով քանի՞ պատկեր կրնանք գնել , եթէ մէկ պատկերը 1 զրուշ արժէ :

Եթէ մէկ թաշկինակը 2 զրուշ արժէ , ի՞նչ կ'արժէ 4 թաշկինակը :

Քանի՞ թաշկինակ կրնանք գնել 8 զրուշով , եթէ 1 թաշկինակը 2 զրուշ արժէ :

1 փողկապը 3 զրուշ կ'արժէ եւ 1 թաշկինակը 2 զրուշ . քանի՞ զրուշ կ'արժեն 2 փողկապ եւ 1 թաշկինակ :

Եթէ մէկ փողկապը 3 զրուշ արժէ , քանի՞ հատ կրնանք գնել 8 զրուշով , եւ քանի՞ զրուշ կ'աւելնայ :

Եթէ մէկ գիրքը 4 զրուշ արժէ , քանի՞ կ'արժէ 2 գիրքը :

8 զրուշով քանի՞ գիրք կրնանք գնել , եթէ 1 գիրքը 4 զրուշ արժէ :

8 կանգուն կտաւով քանի՞ շապիկ կը շինուի , եթէ 1 շապիկի համար 2 կանգուն պէտք ըլլայ :

Օննիկ 4 տարեկան է. Միմոն անոր կրկին տարիքն ունի. ի՞նչ է Միմոնին տարիքը:

Պողոս 4 անգամ մեծ է իր քրոջմէն որ 2 տարեկան է. ի՞նչ է Պողոսին տարիքը:

Իսկուհի զոյգ մը գուլպայի համար կծիկ մը բուրդ կը գործածէ. 4 կծիկով քանի՞ գուլպայ կըրնայ հիւսել:

1 զոյգ գուլպան 4 զրուշ կ'արժէ. ի՞նչ կ'արժէ 2 զոյգը եւ ի՞նչ կ'արժէ ամէն մէկ գուլպան:

Ասատուր 8 զրուշ ունի. 3 զրուշով փողկապ մը պիտի գնէ եւ 4 զրուշով գիրք մը. բաւական դրամ ունի՞ եւ քանի՞ զրուշ կ'աւելնայ:

8 զրուշը քանի՞ հատ 2 զրուշնոց կ'արժէ:

Գաւնիկ 8 զրուշով 2 պատկեր պիտի գնէ. 1 պատկերը քանի՞ զրուշ պիտի արժէ:

Նիկողոս, որ 8 տարեկան է, Միհրանէն 2 անգամ աւելի տարիք ունի: Միհրան քանի՞ տարու է:

$$1+1+1+1+1+1+1+1=\dots; \quad 8 \times 1=\dots;$$

$$8-1-1-1-1-1-1-1=\dots;$$

$$2+2+2+2=\dots; \quad 4 \times 2=\dots; \quad 8-2-2-2=\dots;$$

$$3+3+2=\dots; \quad 2 \times 3+2=\dots; \quad 8-3-3=\dots;$$

$$4+4=\dots \quad 2 \times 4=\dots \quad 8-4=\dots;$$

$$5+3=\dots \quad 3+5=\dots \quad 1 \times 5+3=\dots;$$

$$8-5=\dots \quad 8-3=\dots \quad 8-1=\dots;$$

$$6+2=\dots \quad 2+6=\dots \quad 1 \times 6+2=\dots;$$

$$8-7=\dots \quad 8-6=\dots \quad 8-2=\dots;$$

$$7+1=\dots \quad 1+7=\dots \quad 1 \times 7+1=\dots;$$

$$1 \times 4+4 \times 1=\dots;$$

7ին վրայ քանի՞ առեկցնելու է որ 8 ունենամ :

6ին » » » է որ 8 »

5ին » » » է որ 8 »

4ին » » » է որ 8 »

3ին » » » է որ 8 »

2ին » » » է որ 8 »

1ին » » » է որ 8 »

8էն քանի՞ հանելու է որ 7 ունենամ :

8էն » » է որ 6 »

8էն » » է որ 5 »

8էն » » է որ 4 »

8էն » » է որ 3 »

8էն » » է որ 2 »

8էն » » է որ 1 »

1՞նչ է 2ին ֆառապասիկը, 4ին կրկինը :

Քանի՞ կ'ընէ  $1+7, 2+6, 3+5 \dots 7+1$  :

Քանի՞ կ'ընէ  $8-1, 8-2, 8-3 \dots 8-7$  :

Քանի՞ կ'ընէ  $1 \times 1+7, 2 \times 1+6, 3 \times 1+5,$   
 $4 \times 1+4, 5 \times 1+3, 6 \times 1+2, 7 \times 1+1$  :

Քանի՞ կ'ընէ  $8-1 \times 1, 8-2 \times 1, 8-3 \times 1,$   
 $8-4 \times 1, 8-5 \times 1, 8-6 \times 1, 8-7 \times 1,$   
 $8-8 \times 1$  :

Քանի՞ կ'ընէ  $1 \times 2+2, 2 \times 2+2, 3 \times 2+2$  :

Քանի՞ կ'ընէ  $8-1 \times 2, 8-2 \times 2, 8-3 \times 2,$   
 $8-4 \times 2$  :

Քանի՞ կ'ընէ  $1 \times 3+2, 1 \times 3+3, 8-1 \times 3,$   
 $8-2 \times 3$  :

Քանի՞ կը մնայ, երբ  $2 \times 4$ էն  $1 \times 4, 2 \times 3$  հանենք :

Քանի՞ կ'ընէ 2 անգամ 2, էվել 4 անգամ 1 :

$1 \times 2 + 3 \times 2$ ,  $1 \times 8$ ,  $8 \times 1$ ,  $2 \times 4$ ,  $4 \times 2$ :

Ցին մէջ քանի՞ անգամ 1 կայ. քանի՞ անգամ 2 կայ. քանի՞ անգամ 4 կայ:

Քանի՞ կ'ընէ 4 անգամ 2, աւելի 1:

Անդրանիկ 4 հատ 2 զրուչնոց եւ 1 զրուչ ունի. ամէնը քանի՞ զրուչ ունի:

Կարապետ 5 զրուչնոց մը եւ 2 հատ 2 զրուչնոց ունի. քանի՞ զրուչ ունի:

Մարտիկ 9 զրուչ ունի. 5 զրուչի կեռաս կը գնէ. քանի՞ զրուչ կը մնայ քովը:

9 զրուչը քանի՞ հատ 2 զրուչնոց կ'ընէ. քանի հատ 5 զրուչնոց եւ 2 զրուչնոց կ'ընէ:

1 տետրակը 3 զրուչ կ'արժէ. ի՞նչ կ'արժէ 3 տետրակը. — 9 զրուչով քանի՞ տետրակ կրնանք գնել:

Եթէ մէկ պատկերը 1 զրուչ արժէ, ի՞նչ կ'արժէ 9 պատկերը:

Եթէ մէկ պատկերը 1 զրուչ արժէ, 9 զրուչով քանի՞ պատկեր կրնանք գնել:

Յէն հանեցէք 2 անգամ 3, — 2 անգամ 4, — 3 անգամ 2, — 8 անգամ 1. ի՞նչ կը մնայ:

Մէկ օխա խնձորը 2 զրուչ կ'արժէ. քանի՞ օխա կրնանք գնել 9 զրուչով:

Մէկ օխա տանձը 4 զրուչ կ'արժէ. ո՞րչափ տանձ կրնանք գնել 9 զրուչով:

Քանի՞ կ'ընէ 3 անգամ 3. — 2 անգամ 4, աւելի 1. — 3 անգամ 2, աւելի 3:

Ասաստուր իր հօրմէն 9 զրուշ առաւ. 3 ական զրուշնոց 2 թաշկիկնակ, 2 զրուշնոց կաղամար մը եւ 1 զրուշնոց տետրակ մը պիտի գնէ. բաւական դըրամ ունի՞ :

Բիւզանդ 3 անգամ աւելի տարիք ունի իր եղբորմէն որ 3 տարեկան է. քանի՞ տարեկան է Բիւզանդ :

Քանի՞ հատ 2 զրուշնոց եւ 1 զրուշ կ'ընեն 9 զրուշ :

1 կաղամարը 1 զրուշ կ'արժէ. քանի՞ զրուշ կ'արժէ 9 կաղամարը :

Մարտիրոս 9 զրուշ ունի. 4 ական զրուշնոց 2 գիրք պիտի գնէ. իրեն քով քանի՞ զրուշ պիտի մնայ :

Մարիամ 9 ծաղիկ ունի. երրորդ մասն իր Սաթենիկ քրոջը կուտայ. իրեն քով քանի՞ ծաղիկ կը մնայ, եւ քանի՞ ծաղիկ ունի Սաթենիկ :

6 ծրար ասեղը 9 զրուշ կ'արժէ. ի՞նչ կ'արժէ 3 ծրարը :

$$1+1+1+1+1+1+1+1+1=\dots \quad 9 \times 1 = \dots :$$

$$9-1-1-1-1-1-1-1-1=\dots \quad 9-8 = \dots :$$

$$2+2+2+2+1=\dots \quad 4 \times 2 + 1 = \dots :$$

$$9-2-2-2-2=\dots \quad 9-3-3 = \dots :$$

$$3+3+3=\dots \quad 3 \times 3 = \dots : \quad 9-4 \times 2 = \dots :$$

$$4+4+1=\dots \quad 2 \times 4 + 1 = \dots :$$

$$5+4=\dots \quad 4+5=\dots \quad 1 \times 5 + 4 = \dots :$$

$$9-5=\dots \quad 9-4=\dots \quad 9-3=\dots : \quad 9-1=\dots :$$

$$6+3=\dots \quad 3+6=\dots \quad 1 \times 3 + 6 = \dots :$$



$7+2=\dots$   $2+7=\dots$   $1\times 7+2=\dots$ ;  
 $9-7=\dots$   $9-6=\dots$   $9-2=\dots$ ;  
 $8+1=\dots$   $1+8=\dots$   $1\times 6+3=\dots$ ;

**9էն քանի՞ հանեմ նէ, 8 կ'ուներնամ:**

9էն » » , 7 »  
9էն » » , 6 »  
9էն » » , 5 »  
9էն » » , 4 »  
9էն » » , 3 »  
9էն » » , 2 »  
9էն » » , 1 »

**8ին վրայ 1 աւելցնեմ նէ՝ քանի՞ կ'ուներնամ:**

7ին » 2 » » » »  
6ին » 3 » » » »  
5ին » 4 » » » »  
4ին » 5 » » » »  
3ին » 6 » » » »  
2ին » 7 » » » »  
1ին » 8 » » » »

**Քանի՞ կ'ընէ  $1\times 1+8$ ,  $2\times 1+7$ ,  $3\times 1+6$ :**

**Քանի՞ կ'ընէ  $4\times 1+5$ ,  $5\times 1+4$ ,  $6\times 1+3$ :**

**Քանի՞ կ'ընէ  $7\times 1+2$ ,  $8\times 1+1$ ,  $9\times 1+0$ :**

**Քանի՞ կը մնայ, երբ 9էն  $1\times 1$ ,  $2\times 1$ ,  $3\times 1$  հանենք:**

**Քանի՞ կը մնայ, երբ 9էն  $4\times 1$ ,  $5\times 1$ ,  $6\times 1$  հանենք:**

**Քանի՞ կը մնայ, երբ 9էն  $7\times 1$ ,  $8\times 1$ ,  $9\times 1$  հանենք:**

**Քանի՞ կ'ընէ  $1\times 2+1$ ,  $2\times 2+1$ ,  $3\times 2+1$ ,  
 $4\times 2+1$ :**

**Քանի՞ կը մնայ, երբ 9էն  $1\times 2$ ,  $2\times 2$ ,  $3\times 2$ ,  
 $4\times 2$  հանենք:**

**Քանի՞ կ'ընէ  $1\times 3+3$ ,  $2\times 3+3$ ,  $3\times 3$ ,  
 $3\times 1+1\times 6$ :**

**Քանի՞ կը մնայ, երբ 9էն  $1\times 5$ ,  $2\times 3$ ,  $3\times 3$  հանենք:**

Քանի՞ կ'ընէ  $1 \times 4 + 1$ ,  $2 \times 4 + 1$  :

Քանի՞ կ'ընէ  $9 - 1 \times 4$ ,  $9 - 2 \times 4$  :

Քանի՞ կ'ընէ  $5 \times 1 + 4 \times 1$ ,  $6 \times 1 + 1 \times 3$  :

Քանի՞ կը մնայ, երբ  $3 \times 3$  էն հանենք  $1 \times 5$ .  $1 \times 6$  :

Քանի՞ կ'ընէ 7 անգամ  $1 + 1$  անգամ 2 :

Քանի՞ կը մնայ, երբ  $3 \times 3$  էն հանենք  $1 \times 3$ .  $1 \times 7$  :

Յին մէջ 1, 3, 9 թիւերը քանի՞ անգամ կան :

Յին եռասպսիկն ի՞նչ է : — 9 ո՞ր թուոյն եռասպս-  
սիկն է :



### S U U C

Հեռագրական թելին վրայ շատ մը ծիծեռ-  
նակներ կան : Համրենք այս ծիծեռնակներն .



Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը,  
ութ, ինը ծիծեռնակ :



Հիմա, եթէ ինը ծիծեռնակներուն քով ուրիշ  
մըն ալ գայ կենայ, քանի՞ ծիծեռնակ պիտի ըլլայ  
ամէնը :

Ի ն ն ի ն վ ը ա յ Վ Ե կ աւ ե լ յ ն ե լ ո Վ , կ ' ու ն ե ն ան ք Տ ա ս ր :

※ ※ ※ ※ ※ ※ ※ ※ ※ ※

9 հ ա յ ու ն է ի ն ք . 1 հ ա յ ա լ ա ո ի ն ք . ու ն ե յ ան ք  
